ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2024 թվականի N 1700 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1666-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1.1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի «Հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների հատկացման ու շահագործման, պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը, առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակները, ավտոմեքենաների վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտո-

դողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները, պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների առանձին չափորոշիչները հաստատելու մասին» N 1666-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագիրը «շահագործման» բառից հետո լրացնել «կարգը» բառով և «չափորոշիչները» բառից հետո լրացնել «, հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների տարեկան պահպանման ծախսերի նախատեսման նորմաները, ավտոմեքենա հատկացնելու փոխարեն փոխհատուցման ծախսերի նախատեսման նորմաները և փոխհատուցման կարգը, այլընտրանքային եղանակով իրականացվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման նախատեսման նորմաները և փոխհատուցման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան միջոցների նախատեսման կարգը» բառերով.

2) որոշման նախաբանը «23-րդ կետի» բառերից հետո լրացնել «, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1.1-ին մասի» բառերով.

3) որոշման 1-ին կետը «շահագործման և» բառերից հետո լրացնել «պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով.

4) որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Սահմանել, որ հանրային իշխանության մարմնի ղեկավարի լիազորությունների կամ մարմնի կանոնադրական գործառույթների իրականացմամբ պայմանավորված՝ տրանսպորտային կարիքների բավարարման նպատակով տվյալ մարմնի համար հաստատված սահմանաքանակի շրջանակներում ավտո-

մեքենա հատկացնելու փոխարեն համապատասխան մարմնի ղեկավարի առաջարկության հիման վրա կարող է տրամադրվել տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:».

5) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ կետերով՝

«4.1. Հաստատել հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների տարեկան պահպանման ծախսերի նախատեսման նորմաները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան միջոցների նախատեսման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

4.2. Հաստատել հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենա հատկացնելու փոխարեն փոխհատուցման ծախսերի նախատեսման նորմաները և փոխհատուցման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան միջոցների նախատեսման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի:

4.3. Հաստատել այլընտրանքային եղանակով իրականացվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման նախատեսման նորմաները և փոխհատուցման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան միջոցների նախատեսման կարգը՝ համաձայն N 6 հավելվածի:».

6) ուժը կորցրած ճանաչել որոշման 7-րդ կետը.

7) որոշման 8-րդ կետում «հատկացման և շահագործման, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը և առանձին չափորոշիչները» բառերը փոխարինել «հատկացման, շահագործման և պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ու առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակների սահմանման կարգը» բառերով.

8) որոշման 8.1-ին կետը «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «ձեռք բերվող նոր» բառերով.

9) որոշումը լրացնել նոր՝ NN 4, 5 և 6 հավելվածներով՝ համաձայն NN 1, 2 և 3 հավելվածների:

2. Որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) վերնագիրը «շահագործման և» բառերից հետո լրացնել «պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով.

2) 1-ին կետում «հատկացման, շահագործման, սպասարկման, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց կանոնադրական գործառույթների իրականացման նպատակով տրամադրված տրանսպորտային ծախսերի փոխհատուցման» բառերը փոխարինել «հատկացման, շահագործման և պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ու առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակների սահմանման» բառերով.

3) 3-րդ կետի 2-րդ ենթակետը «փոխարեն» բառից հետո լրացնել «ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության ձեռքբերման տարբերակով» բառերով.

4) 8-րդ կետի 2-րդ ենթակետը «նոր գործառույթի իրականացման համար» բառերից հետո լրացնել «, երբ այդ գործառույթի իրականացման համար անհրաժեշտ է ապահովել աշխատակիցների ավտոտրանսպորտային փոխադրումը» բառերով.

5) 11-րդ կետը «Պաշտոնատար անձանց ծառայողական» բառերից հետո լրացնել «և անձնակազմի սպասարկման համար նախատեսված» բառերով և «8-րդ և 8.1-ին կետերով» բառերը փոխարինել «N 2 հավելվածով» բառերով.

6) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«12. Սույն որոշման N 2 հավելվածով սահմանված չափորոշիչներից տարբերվող չափորոշիչներով ավտոմեքենաների ձեռքբերման թույլտվությունը կոմիտեի առաջարկության հիման վրա տալիս է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

7) ուժը կորցրած ճանաչել 13-րդ և 14-րդ կետերը.

8) 17-րդ կետում «100 փաստացի աշխատողին» բառերը փոխարինել «100 աշխատողին» բառերով.

9) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-ին և 17.2-րդ կետերով՝

«17.1. Անձնակազմի սպասարկման համար նախատեսված տարբերանշանով ավտոմեքենաների սահմանաքանակը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով օրենսդրությամբ տվյալ մարմնի համար հաստատված աշխատողների առավելագույն թվաքանակը:

17.2. Այն դեպքում, երբ բյուջետային տարվա ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում է տվյալ մարմնի աշխատողների առավելագույն թվաքանակի փոփոխություն, որը հանգեցնում է անձնակազմի սպասարկման համար նախատեսված տարբերանշանով ավտոմեքենաների սահմանաքանակի փոփոխության, դրանով պայմանավորված բյուջետային ծախսերի վերահաշվարկը դիտարկվում է առաջիկա տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում:».

10) 18-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) 18-րդ կետի 1-ին ենթակետով նշված մարմինները, վերադաս կառավարման մարմնի համաձայնությամբ, կարող են օգտվել բազային փոխհատուցման շրջանակներում ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության ձեռքբերման հնարավորությունից՝ առավելագույնը բազային փոխհատուցման նորմայի հաշվարկի հիմքում ընկած պահպանման բազային ծախսի չափով:».

11) 25-րդ կետում «(այսուհետ՝ այլընտրանքային տարբերակ) առավելագույնը մեկ ավտոմեքենայի պահպանման համար Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեով նախատեսված ծախսի չափով» բառերը փոխարինել «՝ սույն որոշման N 5 հավելվածին համապատասխան» բառերով.

12) ուժը կորցրած ճանաչել 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ կետերը.

13) 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«30. Պաշտոնատար անձին ծառայողական կամ այդ մարմնին սպասարկող ավտոմեքենա հատկացնելու փոխարեն փոխհատուցում նախատեսելու բյուջետային ֆինանսավորման հայտի առաջարկն ընդունվելու և փոխհատուցման գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսվելու դեպքում համապատասխան մարմինը բյուջետային տարին սկսվելուց հետո մեկ ամսվա ընթացքում նախաձեռնում է իր հաշվեկշռում հաշվառված համապատասխան ավտոմեքենաները սահմանված կարգով կոմիտեի տնօրինմանը հանձնելու գործընթաց։»։

3. Որոշման 8-րդ կետով հաստատված N 3 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի վերնագրում «հատկացման և շահագործման, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը և առանձին չափորոշիչները» բառերը փոխարինել «հատկացման, շահագործման և պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ու առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակների սահմանման կարգը» բառերով.

2) 1-ին կետում «կարգավորվում են» բառերը փոխարինել «սահմանվում են» բառերով, «դատական խորհրդի,» բառերից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի և պալատների,» բառերը և «հատկացման և շահագործման, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց կանոնադրական գործառույթների իրականացման նպատակով տրամադրված տրանսպորտային ծախսերի փոխհատուցման հետ կապված փոխհարաբերությունները և առանձին չափորոշիչները» բառերը փոխարինել «հատկացման,

շահագործման և պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ու առանձին մարմիններին հատկացվող ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների սահմանաքանակների սահմանման կարգավորումները» բառերով.

3) 3-րդ կետի 2-րդ ենթակետը «փոխարեն» բառից հետո լրացնել «ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության ձեռքբերման տարբերակով» բառերով.

4) 8-րդ կետի 2-րդ ենթակետում «կամ հաստիքների ավելացման արդյունքում» բառերը փոխարինել «, երբ այդ գործառույթի իրականացման համար անհրաժեշտ է ապահովել աշխատակիցների ավտոտրանսպորտային փոխադրումը» բառերով.

5) 11-րդ կետում «սույն որոշմամբ հաստատված N 2 հավելվածով սահմանված դրույթներին» բառերը փոխարինել «սույն որոշման N 2 հավելվածով սահմանված չափորոշիչներին» բառերով.

6) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«12. Սույն որոշման N 2 հավելվածով սահմանված չափորոշիչներից տարբերվող չափորոշիչներով ավտոմեքենաների ձեռքբերման թույլտվությունը կոմիտեի առաջարկության հիման վրա տալիս է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

7) ուժը կորցրած ճանաչել 13-րդ և 14-րդ կետերը.

8) 15-րդ կետի 3-րդ ենթակետը «դատավորների» բառից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին և պալատների նախագահներին» բառերով.

9) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«17. Անձնակազմի սպասարկման համար նախատեսված տարբերանշանով ավտոմեքենաները հատկացվում են հանրային իշխանության մարմիններին՝ մինչև 100 աշխատողին մեկ ավտոմեքենա, իսկ 100-ից ավելի աշխատողների դեպքում՝ յուրաքանչյուր 100 աշխատողին մեկ ավտոմեքենա սկզբունքով: Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի և Հայաստանի

Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի դեպքում անձնակազմի սպասարկման համար նախատեսված տարբերանշանով ավտոմեքենաների քանակը հաշվարկվում է 100 աշխատողին մեկ ավտոմեքենա՝ ավելացված աշխատակազմի ղեկավարի տեղակալների թվով սկզբունքով, իսկ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի և Հայաստանի Հանրապետության դատախազության դեպքում՝ 100 աշխատողին մեկ ավտոմեքենա ավելացված մարմնի ղեկավարի տեղակալների թվով սկզբունքով:».

10) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-ին և 17.2-րդ կետերով՝

«17.1. Անձնակազմի սպասարկման համար նախատեսված տարբերանշանով ավտոմեքենաների սահմանաքանակը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով օրենսդրությամբ տվյալ մարմնի համար հաստատված աշխատողների առավելագույն թվաքանակը:

17.2. Այն դեպքում, երբ բյուջետային տարվա ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում է տվյալ մարմնի աշխատողների առավելագույն թվաքանակի փոփոխություն, որը հանգեցնում է անձնակազմի սպասարկման համար նախատեսված տարբերանշանով ավտոմեքենաների սահմանաքանակի փոփոխության, դրանով պայմանավորված բյուջետային ծախսերի վերահաշվարկը դիտարկվում է առաջիկա տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում:».

11) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«18. Հանրային իշխանության մարմնի ղեկավարի առաջարկությամբ տվյալ մարմնին ավտոմեքենա հատկացնելու փոխարեն կարող է նախատեսվել տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝ սույն որոշման N 5 հավելվածին համապատասխան».

12) 25-րդ կետում «(այսուհետ՝ այլընտրանքային տարբերակ) առավելագույնը մեկ ավտոմեքենայի պահպանման համար Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեով նախատեսված ծախսի չափով» բառերը փոխարինել «՝ սույն որոշման N 5 հավելվածին համապատասխան» բառերով.

13) ուժը կորցրած ճանաչել 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ կետերը.

14) 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«30. Պաշտոնատար անձին ծառայողական կամ այդ մարմնին սպասարկող ավտոմեքենա հատկացնելու փոխարեն փոխհատուցում նախատեսելու բյուջետային ֆինանսավորման հայտի առաջարկն ընդունվելու և փոխհատուցման գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսվելու դեպքում համապատասխան մարմինը, բյուջետային տարին սկսվելուց հետո մեկ ամսվա ընթացքում, նախաձեռնում է իր հաշվեկշռում հաշվառված համապատասխան ավտոմեքենաները սահմանված կարգով կոմիտեի տնօրինմանը հանձնելու գործընթաց:».

4. Որոշման 8.1-ին կետով հաստատված N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի վերնագիրը «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «ձեռք բերվող նոր» բառերով.

2) 1-ին կետը «ծախսի հաշվարկը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ձեռք բերվող նոր ավտոմեքենաների առանձին չափորոշիչները» բառերով.

3) V բաժնի վերնագիրը «ավտոմեքենաների» բառից առաջ լրացնել «ձեռք բերվող նոր» բառերով.

4) 19-րդ կետում «Պետական մարմինների համար նոր ձեռք բերվող» բառերը փոխարինել «Հանրային իշխանության մարմինների համար ձեռք բերվող նոր» բառերով.

5) 20-րդ կետից հանել «սահմանված ծառայության ժամկետից պակաս ծառայության ժամկետ ունեցող հատուկ» բառերը և «համապատասխան պետական մարմնի» բառերը փոխարինել «հանրային իշխանության համապատասխան մարմնի» բառերով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

6. Սույն որոշմամբ նախատեսված բյուջետային հարաբերությունները սկսում են գործել, այդ թվում՝ սույն որոշմամբ հաստատված նորմաներին համապատասխան ծախսերը հաշվարկվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկնարկող առաջիկա բյուջետային գործընթացի շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ